ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ք. Երևան, Մ. Բաղրամյան պող.19, ,
հեռ.011 513-480, fvb@parliament.am

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Յոլյան,

Ինչպես հայտնի է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) և Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) միջև 09.10.2020թ., 12.10.2020թ., 13.10.2020թ., 14.10.2020թ., 16.10.2020թ., 16.10.2020թ., 19.10.2020թ., 27.10.2020թ. և 01.11.2020թ. կնքվել են նվիրաբերության պայմանագրեր (այսուհետ՝ Նվիրաբերության պայմանագրեր), որոնց հիման վրա Հիմնադրամը «Ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվություններից պետության, ռազմական դրություն հայտարարելու հանգամանքներով պայմանավորված ենթակառուցվածքների, սոցիալական և առողջապահական ծախսերի ֆինանսավորման համար ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից» թիվ 900005002135 գանձապետական հաշվեհամարին, որպես նվիրաբերություն, փոխանցել է 52,703,113.4 հազ ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ Նվիրաբերության գումար):

Նվիրաբերության պայմանագրերով ՀՀ կառավարությունը պարտավորվել է Նվիրաբերության գումարն օգտագործել պետության, ռազմական դրություն հայտարարելու հանգամանքներով պայմանավորված ենթակառուցվածքների, սոցիալական և առողջապահական ծախսերի ֆինանսավորման նպատակով և Հիմնադրամին ներկայացնել Նվիրաբերության գումարի օգտագործման վերաբերյալ հաշվետվություն:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2021 թվականի մարտի 15-ի «2021 թվականի մարտի 15-ի 29-րդ՝ հեռավար կարգով անցկացված նիստի օրակարգի 1-ին

կետի՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի ընթացքում «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի թվով 9 որոշումներով Հայաստանի Հանրապետության հետ՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարի կնքված պայմանագրերով դրամական միջոցներ փոխանցելու հարցի մասին» թիվ 1 որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որին հանձնարարվել է աշխատել «Բեյքր Թիլլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (ըստ վերոնշյալ որոշման՝ «Բեյքր Թիլլի Արմենիա» աուդիտորական ընկերություն) և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ պատերազմի ընթացքում հավաքագրված միջոցների օգտագործման նպատակների հստակեցման հարցով և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին ներկայացնել եզրակացություն:

Նախարարության կողմից 2021 թվականի հունիսի 7-ին Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին ներկայացվել է հաշվետվություն Հիմնադրամի կողմից պետությանը կատարված նվիրաբերությունների շնորհիվ ընձեռնված հնարավորությունների շրջանակներում պետության, ռազմական դրություն հայտարարելու հանգամանքներով պայմանավորված ենթակառուցվածքների, սոցիալական և առողջապահական ծախսերի ֆինանսավորման նպատակով կատարված ծախսերի վերաբերյալ, որի համաձայն՝ վկայակոչված ծախսերը 2020 թվականին կազմել են 19.888 մլրդ դրամ, իսկ 2021 թվականին՝ 33.255 մլրդ դրամ:

«Բեյքր Թիլլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2021 թվականի հուլիսի 6-ի 2020թ. պատերազմի ընթացքում Հիմնադրամի կողմից հավաքագրված և Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերված միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ դիրքորոշմամբ «Բեյքր Թիլլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը՝ որպես աուդիտորական ընկերություն, հավաստիացրել է, որ Հիմնադրամի կողմից պետությանը նվիրաբերված գումարներն ամբողջությամբ փոխանցվել են թիվ 900005002135 գանձապետական հաշվեհամարին: Նախարարության կողմից ներկայացված փաթեթում առկա են ՀՀ կառավարության համապատասխան որոշումները, Նախարարության կողմից ծախսված գումարների վերաբերյալ հաշվետվությունները և համապատասխան նախարարությունների կողմից ներկայացված գրությունները՝ Նախարարությունից ստացված գումարների՝ ըստ նպատակայնության ծախսման վերաբերյալ: Նախարարության ներկայացրած հաշվետվությունում հիշատակված ՀՀ կառավարության որոշումներով սահմանված նպատակները համապատասխանում են Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումների արդյունքում կնքված թվով ինը նվիրաբերության պայմանագրերի նպատակներին՝ սոցիալական, առողջապահական և ենթակառուցվածքների ոլորտներին:

«Բեյքր Թիլլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը՝ որպես աուդիտորական ընկերություն, ընդունել է Հիմնադրամի և Նախարարության կողմից սահմանված հաշվետվությունների ճշգրտությունը, սակայն նշել է, որ չի կարող որևէ կարծիք արտահայտել Նախարարության ներկայացրած հաշվետվությունում արտացոլված ծախսերի հավաստիության վերաբերյալ, քանի որ իրավասություն չունի պետական

կառավարման մարմինների կողմից կատարված ծախսերի սկզբնական փաստաթղթերն ուսումնասիրելու: Նման լիազորությամբ օժտված է ՀՀ հաշվեքննիչ պալատը:

Աշխատանքային խմբի 2021 թվականի հուլիսի 6-ի եզրակացությամբ արձանագրվել է, որ հավաքագրված և Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերված միջոցները, համաձայն Նախարարության ներկայացրած հաշվետվության փաթեթի, ուղղվել են Նախարարության և Հիմնադրամի միջև կնքված նվիրաբերության պայմանագրերում ամրագրված նպատակներին:

Հավաստվել է, որ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումներով Նախարարության հետ կնքված թվով ինը նվիրաբերության պայմանագրերով նախատեսված գումարները ՀՀ կառավարությանն են փոխանցվել նշված պայմանագրերի նպատակներին համապատասխան, և որ Նախարարության կողմից ներկայացրած հաշվետվությունում հիշատակված ՀՀ կառավարության որոշումներով սահմանված նպատակները, ըստ որի՝ գումարները փոխանցվել են շահագրգիռ նախարարություններին, համապատասխանում են Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշումների ներքո կնքված թվով ինը պայմանագրերի նպատակներին՝ սոցիալական, առողջապահական և ենթակառուցվածքների ոլորտներին:

Կարևոր է ընդգծել վերոնշյալ եզրակացությամբ արձանագրված այն փաստարկը, որ ինչպես Հիմնադրամը, այնպես էլ անկախ աուդիտորական կազմակերպությունն իրավասություն չունեն իրականացնել պետական կառավարման մարմինների կողմից կատարված ծախսերի սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրություն, քանի որ, ՀՀ օրենդրության համաձայն, պետական բյուջեի եկամուտների և ծախսերի ուսումնասիրությունը կարող է իրականացնել ՀՀ Հաշվեքննիչ պալատը:

Այսպիսով, թե «Բեյքր Թիլլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը՝ որպես աուդիտորական ընկերություն, թե աշխատանքային խումբը Նախարարության կողմից տրամադրված հաշվետվությամբ ներկայացված ծախսերի հավաստիության գնահատումն իրավացիորեն կապել են ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող պետական բյուջեի կատարման հաշվեքննության հետ:

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի մայիսի 27-ի թիվ 168-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացությամբ արձանագրվել է, որ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի միջոցների ֆինանսական փաստաթղթերի վարման պահանջների կատարումը և դրա արդյունքում ձևավորված հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունը, և, ըստ այդմ, ՀՀ հաշվեքննիչ պալատը Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ արտահայտել է դրական եզրահանգում: Ընդ որում, որ ՀՀ հաշվեքննիչ պալատի եզրակացությամբ արձանագրված անհամապատասխանությունները և խեղաթյուրումները չեն վերաբերում Նախարարության կողմից ներկայացրած հաշվետվությունում հիշատակված ծրագրերին և միջոցառումներին:

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատը հաշվեքննություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցներից ֆինանսավորվող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և հիմնարկներում:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հաշվեքննության նպատակն է պարզել հաշվեքննության առարկայի օրինականության ու տնտեսման, նպատակային և ծախսային արդյունավետության սկզբունքների պահպանումը:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հաշվեքննության տեսակներն են՝

(...)

2) համապատասխանության հաշվեքննություն՝ հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվող հաշվեքննության տեսակ, որի միջոցով որոշվում է պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման համապատասխանությունն իրավական ակտերին, ինչպես նաև քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում կնքված այլ գործարքներով սահմանված չափանիշներին և պահանջներին.

(...):

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հաշվեքննիչ պալատն իրավասու է նույն օրենքով սահմանված կարգով պայմանագրային հիմունքներով հաշվեքննության գործընթացում ներգրավելու համապատասխան բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող մասնագետի կամ հաշվեքննության վերաբերյալ հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող փորձագետի:

Հարկ է նշել նաև, որ 2021 թվականի նոյեմբերի 27-ին կայացել է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 30-րդ նիստը: Նիստի օրակարգում ընդգրկված 1-ին հարցի քննարկման արդյունքներով ՀՀ վարչապետը, դիմելով ՀՀ հաշվեքննիչ պալատին, առաջարկել է դիտարկել խնդրո առարկա հարցով կատարվելիք հաշվեքննություններում աշխատանքային խմբին և աուդիտորական կազմակերպությանը փորձագիտական մակարդակով ներգրավելու հնարավորությունը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Օրենքի կարգավորումներն ու հարցի վերաբերյալ հանրային հետաքրքրությունը՝ առաջարկում ենք իրականացնել Նախարարության կողմից ներկայացված հաշվետվությամբ վկայակոչված ծախսերի համապատասխանության հաշվեքննություն՝ դրան մասնակից դարձնելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի աշխատանքային խմբի և աուդիտորական կազմակերպության կողմից լիազորված փորձագետներին:

Հարգանքով՝

Հանձնաժողովի նախագահ **ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ**